ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ

ВОПРОСЫ ИСТОРИИ КПСС, № 6, 1967

Ամսագրի «Դեպի մեծ Հոկտեմբերի 50-ամյակը» բաժինը բացվում է Տ. Տ. Տիմոֆեևի «Հոկտեմբերյան հեղափոխության միջազգային նշանակությունը և ժամանակակից գաղափարական պայքարը» հոդվածով։ Հոդվածի հեղինակը նշում է, որ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը ՍՍՀՄ-ում, սոցիալիզմի կառուցումը և կոմունիստական շինարարությունը ցույց են տվել և ցույց են տալիս հսկայական ազդեցություն ամբողջ համաշխարհային հեղափոխական շարժման վրա։ Նա նոր նյութերի հիման վրա ցույց է տալիս, թե ինչպես հակակոմունիզմի բուրժուական գաղափարախոսները փորձում են նսեմացնել մեծ Հոկտեմբերի նշանակությունը համաշխարհային բանվորական և հեղափոխական շարժման մեջ։ Այդ գաղափարախոսների թվին են պատկանում արևմուտքի ժամանակակից «սովետագետներ»՝ Է. Կարրը, Ռ. Դենիելսը, Մ. Խինդուսը և այլն։

Այդ նույն բաժնում տպագրված է «Կուսակցությունը հաղթական ապստամբության կազմակերպիչ» խորագրով հոդվածը, որտեղ նոր նյութերի հիման վրա քննարկվում են այնպիսի հարցեր, ինչպես՝ ապստամբության սկիզբը, Սովետների համառուսական համագումարը, հեղափոխության պաշտպանությունը մասսաների կողմից և այլ հարցեր։

Ամսագրի «Քննարկումներ» բաժնում տպագրված են Վ. Յա. Լևինի «Պետական կապիտալիզմի սոցիալ-տնտեսական բնույթի հարցի շուրջը», Պ. Պ. Բաչինսկու «Նեպ-ի մի քանի առանձնահատկություններ Ուկրաինայում» հոդվածները։

Հետաքրքիր նյութեր են պարունակում ամսագրի «Հաղորդումներ» բաժնում տպագրված Գ. Կ. Դոլունցի «1910—1914 թթ. Ս. Մ. Կիրովի գործունեության մասին», Ա. Մ. Մուսաևի «Գյուղատնտեսության արտադրության մեջ կոմունիստների տեղաբաշխման գործում Հյուսիսային Կովկասի կուսակցական կազմակերպությունների աշխատանքի փորձից (1953—1958 թթ.)» հոդվածներում։ Ամսագիրն ունի նաև «Մարդիկ, իրադարձություններ, փաստեր», «Հիշողություններ», «Քննադատություն և բիբլիոգրաֆիա», «Գիտական կյանք» բաժինները։

КОММУНИСТ № 9, 1967

Ամսագիրը սկսվում է «Սովետական գրականության բարձր պատիվը» առաջնորդողով։

«Դեպի մեծ Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակը» խորագրի տակ տպագրված են Ավստրիայի կոմունիստական կուսակցության պատվավոր նախագահ Իոզանն Կոպլենիգի «Հոկտեմբերի գաղափարների ձգողական ուժը» և Բ. Մորոզովի «Հոկտեմբերյան հեղափոխությունը և սովետները» հոդվածները։ Ի. Կոպլենիգը իր հոդվածում անդրադառնալով մեծ Հոկտեմբերի համաշխարհային նշանակությանը, նշում է, որ Ռուսաստանում հաղթանակած հեղափոխությունը ցնցեց կապիտալիստական կարգերը ամբողջ հողագնդում։ Եվրոպայի ժողովուրդները, որոնք խոր ատելությամբ էին լցված դեպի իմպերիալիստական պատերազմները, սիրով ընդունեցին Հոկտեմբերի հաղթանակը Ռուսաստանում։ Այնուհետև նա նշում է, որ Հոկտեմբերյան հեղափոխության շնորհիվ 50 տարվա ընթացքում աշխարհի պատկերը հիմնովին փոխվեց, բուռն զարգացում ապրեց բանվորական, ժողովրդական շարժումը։

Ամսագրի «Լենինիզմը և աշխարհի Հանաչողությունը» բաժնում տպագրված են Լ. Դրույանովի «Բնագիտության օրենքների լենինյան բնութագրման ժամանակակից նշանակությունը», Յու. Լուկինի «Վ. Ի. Լենինը նոր տիպի արվեստագետի մասին» հոդվածները։

Հետաքրքիր հոդվածներ են տպագրված նաև ամսագրի «Սոցիալիստական տնտեսվարության պրոբլեմները», «Միջազգային թեմաներ» բաժիններում։

ВОПРОСЫ ФИЛОСОФИИ № 5, 1967

Ամսագրի առաջին բաժինը նվիրված է մեծ Հոկտեմբերի 50-ամյակին։ Այդ բաժնում տպագրված են Ա. Ֆ. Կորոբկովի «Սոցիալիզմը և Արևելքի երկրները», ակադեմիկ Բ. Ս. Կեդրովի «Գիտության դերի բարձրացումը մեր դարաշրջանում», Գ. Աշուրովի «Մարքս-լենինյան փիլիսոփայության զարգացումը Տաջիկստանում» հոդվածները։

Ակադեմիկ Բ. Մ. Կեդրովը իր հոդվածում, որը հիմնված է 1966 թ. հունիսին ՍՍՀՄ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի բաժանմունքի գիտական սեսիայում կարդացած զեկուցման վրա, մանրամասն վերլուծում է գիտության հարաճուն զարգացումը և նրա գերը մեր դարաշրջանում։ Հոդվածում քննարկվում են այնպիսի հարցեր, ինչպիսին են՝ ժամանակակից գիտատեխնիկական զարգացման որոշիչ գործոնները, գիտության ֆունկցիաները, նրանց աստիճանական բացահայտումը, գիտության զարգացման մի քանի առանձնահատկություններ տեխնիկայի և արտադրության նկատմամբ, բնության վաղուց հայտնի օբյեկտներից դեպի մարդու կողմից դեռևս չուսումնասիրված նորի օգտագործումը և այլն։

Տեսական և պրակտիկ նշանակություն ունեցող հետաքրքիր հարցեր են լուսաբանված ամսագրում տպագրված Մ. Ա. Վիտկինի «Նախասկզբնական հասարակական կացութաձևը Կ. Մարքսի աշխատություններում», Ժ. Օշավկովի «Սոցիոլոգիական հետազոտություններում ընտրականության մեթոդի մասին», Բ. Ս. Ուկրաինցևի «Ակտիվություն» և «նպատակ» կատեգորիաները կիբերնետիկայի հիմնական հասկացության լույսի տակ», Յու. Բ. Բյումերի, Մ. Ս. Բիվկինի «Մաթեմատիկական մեթոդների գերը ֆիզիկայում» և այլ հոդվածներում։

Ընթերցողների ուշադրությունն են գրավում նաև ամսագրի «Գիտական կյանք», «Քննադատություն և բիբլիոգրաֆիա», «Փիլիսոփայությունը արտասահմանում» բաժիններում հրապարակած մի շարք նյութեր։